Հայաստանեայցս եկեղեցւոյ՝ նոյն վարեսջիք առանց աւելման և պակասման. և մանաւանդ որպէս ի նախնեաց ձերոց առ ձեզ հասեալ կայ՝ անթերի ունիցիք. որ այսուհետեւ այլ աւելի պակաս բան չխառնէք. թէ պատարագի արարողութիւն և թէ ժամակարգութիւն, և այլն ամենայն՝ ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ լիցի։ — Զորրորդ, պահանջեմ որ ձեր եպիսկոպոսն ի սուրբ Էջմիածնայ հայրապետէն լիցի ձեռնադրեալ, և նորին հրամանաւ նստցի այդըր. և դուք հպատակ և հնազանդ լինիք, ըստ կանոնաց սուրբ հարցն, և առանց մերոյ հրամանի և նշանի՝ թէ եպիսկոպոս անուն թէ վարդապետ, թէ այլ աստիճանաւոր, ամենեւին չթողուք ի ձեր մէջն։ Քանի իսկ գիտակ էք, որ այդքան խռովութեան պատճառ յայդպիսեացդ եղեւ։ Եթէ զպատուէր մեր կատարեսջիք, յոյս ունիմ ի Քրիստոսէ՝ որ փութով ազատութիւն տացէ ձեզ։ — Եւս, ի մէնջ եպիսկոպոս և դպրապետ էիք խնդրեալ. ահա մեր հոգեւոր և սիրելի որդի Յոհան վարդապետն՝ ձեզ շնորհեցի. որ կարող է զամենայն գործ ձեր կատարել. եթէ վարպետ եւս պիտոյասցի, ղեկուսջիք որ առաքեմ։

Դարձեալ, պատուիրեմ, զի խօճայ Նիկողայոսի զերախտիսն չմոռանայք. վասն ձեր շատ ջանաց. ըստ իւր աշխատանացն երախտահատոյց լինիք։

Յանձն առնեմ զձեզ շնորհաց Ս. Հոգւոյն և Ս. Լուսաւորչի աղօթիցն։ Ողջ լերուք ի Տէր։ — Թվին ՌՃԲ. փետրվար ամսոյ Ժ։

ԵՍ ՓԻԼԻՊՈՍ ԻՄՈՎ ԶԵՌՄԲՍ ԳՐԵՑԻ։